

LOUIS LELOIR, *Paterica armeniaca a P. P. Mechitaristis edita* (1855) nunc latine reddita, „Corpus Scriptorum Christianorum Orientalium“, t. I (Vol. 353 Subs. 42), 1974; t. II (Vol. 361 Subs. 43), 1975; t. III (Vol. 371 Subs. 47), 1976; t. IV (Vol. 379 Subs. 51), 1976. Louvain.

ԼՈՒԻ ԼԵԼՈՐԱՐ, Հայոց «Վարժ Հարանցի» լատիներեն քաղգմանությունն ըստ Մխիթարյան Հայրերի 1855 թ. հրատարակության, հատ. 1—4, Լուվեն. 1974—1976:

Լուի Լըլուարը ժամանակակից եվրոպական հայագիտության աչքի ընկնող դեմքերից մեկն է, որի հետաքրքրությունների առարկան են հանդիսանում հիմնականում հայ թարգմանական գրականության խնդիրները: Հիշենք թեև Լուի Լըլուարը «Համաբարբառի մեկնության» և Աստվածաշնչի հայերեն բնագրերին նվիրված նրա հմտալից ուսումնասիրությունները¹: Գրախոսվող աշխատությունը հեղինակի մի նոր նշանակալից ներդրումն է հայագիտության ասպարեզում:

Ջրույցների և խրատների «Վարք Հարանց» կոչվող ժողովածուն, որը նվիրված է ճգնակեցության հետաքրքրաշարժ դրվագներին և հետապնդում է բարոյա-ուսուցողական նպատակներ, ձևավորվել է IV—V դդ., մեծ մասամբ էգիպտացի անապատականների միջավայրում և թարգմանաբար տարածվել ողջ քրիստոնեական աշխարհում: Հայտնի են ժողովածուի հունարեն, լատիներեն, եթովպերեն, ասորերեն, արաբերեն, հայերեն բնագրերը: Վերջինս մեզ է հասել երկու խմբագրությամբ կամ, այսպես կոչված, հին և երկրորդ թարգմանություններով: Առաջին խմբագրությունը XII դարի վերջում նախաձեռնել է հայ մատենագրության (նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Ներսես Լամբրոնացին, ի մի բերելով ժողովածուի զանազան մասերի հնագույն թարգմանությունները: Երկրորդ խմբագրությունն ուսումնասիրողների կարծիքով իրագործվել է նույնպես Կիլիկիայում, XIV դարում: Վերջինս աչքի է ընկնում բազմաթիվ նոր նյութերի ընդգրկմամբ և հա-

մեմատաբար ազելի կանոնավոր կառուցվածքով: Ժողովածուն մեծ ժողովրդականություն է վայելել Հայաստանում, ընդօրինակվել հարյուրավոր ձեռագրերում: Միջնադարյան հայ առակագրությունն ու զրուցագրությունը կրել են նրա ղգալի ազդեցությունը²:

«Վարք Հարանց» ժողովածուի հայերեն բնագրի երկու խմբագրությունները համադրաբար լույս են տեսել Վենետիկում 1855 թ. Ն. Սարգսյանի աշխատասիրությամբ³: Բուն բնագրում զետեղվել է առաջին խմբագրությունը, իսկ տողատակ, մանր տառերով՝ երկրորդը: Երկրորդ խմբագրության այն հատվածները, որոնք չունեն իրենց համապատասխանություններն առաջինում, տեղ են գտել ժողովածուի յուրաքանչյուր գլխի հավելվածում՝ «Մնացորդ յերկրորդ թարգմանութենէ» խորագրի տակ: Առաջին խմբագրության բնագիրը պատրաստված է վեց, իսկ երկրորդինը՝ չորս ձեռագրերի հիման վրա: Ժողովածուն բաղկացած է չորս

² Հմմտ. Н. Марр, Собрания притч Вардана, ч. I, СПб., 1899, էջ 260—261: Գ. Տեր-Մկրտչյան, Հայկական, ԺԶ, Վաղարշապատ, 1899, էջ 30—37: Ա. Սրապյան, Հայ միջնադարյան զրույցներ, Երևան, 1969, էջ 45—48:

³ «Վարք սրբոց հարանց և քաղաքավարութիւնք նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց», հատ. 1—2, Վենետիկ, 1855: Գրքում նշված չէ աշխատասիրողի անունը: Նրա մասին տեղեկանում ենք Լ. Լըլուարի ուսումնասիրության ներածությունից (տե՛ս L. Leloir, *Paterica...*, t. I, „CSCO“ 353 Subs. 42, էջ VI) և հետևյալ մատենագիտական ուղեցույցից. «Գրացուցակ Մխիթարեան տպարանին (1716—1960)», Վենետիկ, 1960, էջ 13:

¹ Լ. Լըլուարի հայագիտական աշխատությունների համառոտ ցանկը տե՛ս Հայկական մատենագիտություն, հատ. 2, Երևան, 1976, էջ 630—632:

մասից՝ «Պատմություն և վարք սրբոց անապատաւոր ճգնաւորաց», «Բանք և պատմութիւնք սուրբ հարանցն», «Խրատք սուրբ հարանցն» և «Խրատք նեղոսի»:

Լրլուարն իրագործել է երկրորդ ամենածավալուն մասի լատիներեն թարգմանությունը, որն ընդգրկում է Ն. Սարգսյանի հրատարակության առաջին հատորի 411—722 և երկրորդ հատորի 5—504 էջերը: «Բանք և պատմութիւնք սուրբ հարանցն» բաժինը կազմում է «Վարք Հարանց» ժողովածուի կորիզը: Ըստ գրույցների բովանդակության այն բաժանված է 19 գլուխների. Ա—Վասն կատարեալ առաքինութեան, Բ—Վասն հանդարտութեան, Գ—Վասն մտաբացութեան կամ զղջութեան և արտասուաց, Դ—Վասն ժուժկալութեան, Ե—Վասն զգուշութեան պոռնկութեան, Զ—Վասն անընչութեան, Է—Վասն արիութեան և համբերութեան, Ը—Վասն ոչ առնել ինչ ի ցոյցս մարդկան, Թ—Վասն դատելոյ, Ժ—Վասն աստուածային և ուղիղ դատաստանի, ԺԱ—Վասն արթուն և զգաստ լինելոյ, ԺԲ—Վասն աղօթից, ԺԳ—Վասն օտարասէր և ողորմած լինելոյ, ԺԴ—Վասն հնազանդութեան, ԺԵ—Վասն խոնարհութեան, ԺԶ—Վասն անյիշաշարութեան, ԺԷ—Վասն սիրելոյ զաստուած և զընկերն, ԺԸ—Վասն հոգեւտես և նշանազգեաց հարցն, ԺԹ—Վասն քաղաքավարութեան հարցն: Ինչպես տեսնում ենք, այս գլուխներն արտացոլում են անասլատական բարոյախոսության բոլոր կողմերը.

Լատիներեն թարգմանության առաջին հատորի V—XII էջերն զբաղեցնող ներածության մեջ Լրլուարը հիմնավորապես արժեքավորում է վենետիկյան հրատարակությունը՝ ի պատասխան տիրող այն կարծիքի, թե ժողովածուի այլալեզու բնագրերի բոլոր առկա հրատարակություններն էլ ի վիճակի չեն բավարարելու արդի բանասիրության պահանջները: Ըստ Լրլուարի՝ վենետիկյան հրատարակությունն ունի «համեմատաբար լայն և վստահելի ձեռագրական հիմք» և Ն. Սարգսյանը «հարազատորեն է վերարտադրել իր աղբյուրները»⁴: Ներածության երկրորդ բաժնում հեղինակը ներկայացնում է իր թարգմանական սկզբունքները: Մասնավորապես լատիներենի ընտրությունը Լրլուարը բացատրում է հայերեն բնագրի բառացի, հարազատ վերարտադրության անհրաժեշտությամբ⁵, քանի որ նրա թարգմանության նպատակն է բավարարել ոչ թե գրական-գեղարվեստական, այլ գիտական-բանասիրական պահանջներ: Ուստի նա ձգտել է թարգմանության մեջ հնա-

րավորին չափ պահպանել հայերեն բառերի կաշուն համարժեքները: Այսպես, օրինակ, միայնակեաց բառը Լրլուարը միշտ վերարտադրել է լատիներեն solitarius, իսկ կրաւնաւոր-ը՝ monachus բառով: Ավելին, նա հաճախ պահպանել է նաև հայերեն բառաբարդությունները կառուցվածքը, ինչպես՝ աստուածպաշտութիւն, ձեռագործ բառերն արտահայտել է Dei-cultus, manu-opus բարդություններով՝ լատիներենին ավելի հարազատ cultus-Dei և opus-manuum ձևերի փոխարեն: Նման բժախնդրությունն ինքնանսլատակ չէ, քանի որ, ինչպես ցույց է տալիս հեղինակը, ժողովածուի երկու խմբագրությունների տարբերությունները երբեմն արտահայտվում են յուրահատուկ բառերի գործածությամբ: Օրինակ, Լեէց (presbyter) և միայնակեաց (solitarius) բառերը ավելի հաճախ հանդիպում են առաջին խմբագրության մեջ, իսկ դրանց փոխարեն երկրորդում մեծ մասամբ գործածվում են ֆաւնաւայ (sacerdos) և կրաւնաւոր (monachus) բառերը: Այս երեւոյթը կարևոր նշանակություն ունի Հայաստանում անապատական շարժման հետ կապված հասկացությունների զարգացումը պարզելու տեսակետից:

Լրլուարը լատիներեն թարգմանության մեջ նույնությամբ՝ գլուխ առ գլուխ, գրույց առ գրույց պահպանել է Ն. Սարգսյանի հրատարակության կառուցվածքը: Որպես առավելություն վերջինիս նկատմամբ պետք է նշել լատիներեն թարգմանության մեջ կիրառված պայմանական նշանների գործածությունը և գրույցների համարակալումը, որոնք զգալիորեն հեշտացնում են հետադոտողի աշխատանքը: Առաջին խմբագրության գրույցները նշանակված են A տառով, երկրորդինը՝ B: «Մնացորդք յերկրորդ թարգմանութենէ» խորագրի տակ ամփոփված գրույցները հերթական համարների կողքին կրում են R (=Reliquiae) տառանիշը: Սակայն Լրլուարի աշխատության ամենամեծ արժանիքն այն է, որ հեղինակը մեկ առ մեկ պարզել է հայերեն բնագրի յուրաքանչյուր գրույցի համապատասխանություններն ու զուգահեռները «Վարք Հարանց» ժողովածուի բազմալեզու՝ հունարեն, լատիներեն, եթովպերեն, ասորերեն և այլ բնագրերում: Այդ համապատասխանությունները համարարառի ձևով նշանակված են ամեն մի գրույցի թարգմանությունից առաջ, ինչպես նաև աշխատության շորրորդ հատորի վերջում զետեղված ընդհանուր ուղեցույցում՝ «Աստվածաշնչական մեջբերումների», «նյութե-

⁴ L. Leloir, *Paterica...*, t. I, „CSCO“ 353 Subs. 42, էջ VIII:

⁵ Նույն տեղում, էջ IX:

⁶ L. Leloir, *Paterica...*, t. IV, „CSCO“ 379 Subs. 51, էջ 240—269:

րի», «Անձնանունների» և «Տեղանունների» լիակատար ցանկերը⁷ լրացնում են բոլոր անհրաժեշտ բանասիրական տվյալները:

Այսպիսով, դիտական շրջանառության մեջ է դրված մի բարձրարժեք աշխատություն, որի շնորհիվ, պետք է հուսալ, «Վարք Հարանցի» լայնորեն բնագիրն այսուհետև կարժանանա ժողովածուի ուսումնասիրությանը զբաղվող բոլոր մասնագետների ուշադրությանը, իր արժանի տեղը գրավելով մյուս բնագրերի կողքին:

Անհրաժեշտ են համարում կատարել մատենագիտական բնույթի մի փոքրիկ ճշգրտում: Լրլուարը նշում է, որ «Վարք Հարանցի» հայերեն բնագրի երկրորդ խմբագրությունն առաջին անգամ տպագրվել է Կոստանդնուպոլսում 1721 թ.՝ Սակայն հայտնի է, որ դրանից շատ առաջ՝ 1641 թ. այն հրատարակվել է Նոր-Ջուղայի խաչատուր Կեսարացու հիմնադրած տպարանում⁸:

Լ. Ն. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ДРЕВНИЙ ВОСТОК», 2, Изд-во АН АрмССР, ЕРЕВАН, 1976, 312 стр.

Стало хорошей традицией издание сборника «Древний Восток», осуществляемое усилиями сотрудников отдела Древнего Востока Института востоковедения АН АрмССР, при тесном сотрудничестве Ленинградского отделения Института востоковедения АН СССР и с участием известных отечественных и зарубежных специалистов. Само это явление знаменательно не только в смысле весьма плодотворного и широкого научного сотрудничества, но главным образом тем, что выпускаемый институтом сборник, несмотря на определенные недостатки, стоит, несомненно, на современном научном уровне.

Вышел в свет второй выпуск сборника «Древний Восток», который включает 15 статей, относящихся к самым разнообразным вопросам истории и филологии Древнего Востока и стран Закавказья. Разумеется, в предлагаемой маленькой рецензии могут быть затронуты лишь отдельные стороны представленных исследований.

Сборник открывается ценной статьей венгерского ассириолога Г. Комороци, посвященной посреднической торговле Ура, осуществляемой в начале II тыс. до н. э. через остров Тильмун (Бахрейн). Автор выясняет древние караванные и морские пути этого района, наименования предметов ввоза и вывоза, локализацию торговых городов вне пределов Шумера, время составления соответствующего отрывка шумерского эпоса и ряд более частных фактов. Конечно, в силу характера рассматриваемого источника не все перечисленные вопросы разрешены полностью, однако подобный обстоятельный разбор соответствующего

шумерского документа дается впервые, и это представляется значительным шагом вперед по сравнению с тем, что было сделано в свое время известным американским шумерологом С. Крамером.

Для истории, экономики, археологии Древнего Востока и Армянского нагорья немаловажное значение имеет работа ленинградского востоковеда А. А. Ваймана, посвященная шумеро-вавилонской метрологии времен III династии Ура и I династии Вавилона (конец III—начало II тыс. до н. э.). В основу исследования положены старовавилонские математические задачи, в которых содержатся интересные сведения, например, о грузоемкости судов, выраженной в исчислении разнообразных товаров. Анализируя эти задачи, Вайман устанавливает меры длины, площади, объема, емкости и веса.

В статье хеттолога В. Н. Хачатряна на основе хеттских религиозно-ритуальных текстов рассматриваются неисследованные вопросы топонимики центральных районов страны Хатти, уточняется локализация ряда городов и населенных пунктов страны. Такая работа представляется интересной не

⁸ L. Le Lion, *Paterica...*, t. I, «CSCO» 353 Subs. 42, էջ VI: Ի նկատի ունի հետևյալ տպագրությունը. «Գիրք որ կոչի Հարանց վարք...», Կ. Պոլիս, տպագրության սկիզբը՝ 1720 թ., ավարտը՝ 1723 թ.:

⁹ Գրքի սկիզբն է. «Յանկ է: Գլխաւոր բանից: Հարանց վարուց սուրբ գրոց: Վասն առաջաբանութեան գրոց վարուց սրբոց հարցն: Վասն կատարեալ առաքինութեանցն...»: Հիշատակարանում տպագրության թվականն ու վայրը նշված են այսպես. «Թվին .ո.դ. Ի քաղաքն շոշ. որ է սպահան. յանապատն նոր շուղայոյ»:

⁷ Նույն տեղում, էջ 187—239: